

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. հունվարի 24-ից 30-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Հունվարի 27-ի ցերեկը, 28-ի գիշերը շրջանների զգալի մասում դիտվել է ձյուն՝ 7-13մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից 2-6 աստիճանով, միայն Լոռիում և Տավուշում այն եղել է նորմայի սահմաններում մի փոքր բացասական շեղումով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Տավուշում՝ +6...+12°C, Սյունիքի հովիտներում՝ +11°C, նախալեռներում՝ +4...+8°C, Արարատյան դաշտում՝ +7...+8°C, Լոռիում՝ +4...+8°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +8°C, լեռներում՝ +1°C, Գեղարքունիքում՝ -2...+3°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ 0...+7°C, լեռներում՝ -2°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +4°C, լեռներում՝ -2...+2°C, Շիրակում՝ 0...-5°C և Երևանում՝ +6°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Շիրակում՝ -16...-21°C (Աշոցք՝ -24°C), Արագածոտնում՝ լեռներում՝ -18...-19°C, նախալեռներում՝ -8...-11°C Գեղարքունիքում՝ -9...-14°C, Կոտայքում՝ լեռներում՝ -13...-16°C, նախալեռներում՝ -11°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -14°C, նախալեռներում՝ -8°C, Լոռիում՝ -5...-9°C (Տաշիր՝ -12°C), Արարատյան դաշտում՝ -10...-13°C, Տավուշում՝ -4...-5°C (Դիլիջան՝ -10°C), Սյունիքի նախալեռներում՝ -5...-12°C, հովիտներում՝ -5...-5°C և Երևանում՝ -6...-10°C:

Հունվարի 25-ին Գյումրիում և Գորիսում դիտվել է դիտվել է մառախուղ 300-200-500մ տեսանելությամբ:

Հունվարի 24-ին, 29-30-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում 15-18մ/վրկ, պոռթկումների ժամանակ 20-25մ/վրկ արագությամբ:

Հունվարի 31 -ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը կազմում է Արագած բ/լ-ում՝ 82սմ, Զերմուկում՝ 71սմ, Հրազդանում, Ամբերդում՝ 62-63սմ, Ապարանում, Ֆանտանում և Ամասիայում՝ 45-48սմ, Սեմյոնովկայում՝ 43սմ, Աշոցքում՝ 33սմ, մնացած շրջաններում՝ 8-25սմ: Արարատյան դաշտում, Տավուշում, Լոռիում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով (23.01.22-30.01.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.39մ (30.01.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 13 սմ-ով: